



Հանեւ . որով Պյուտիկֆօռդի խռովութիւնը աւետելէն ետքը կը պատուիրէ որ ցերեկին մինչեւ իրիկուն զինուորական թմբուկը զարնեն , և իրիկուընէ մինչեւ լցո կրտսկ վառեն շրջակայ լեռները . և գքսին կառավարութեան զինուորները դուրս թող չի տան բաննեն , և ինչքերնին առնեն . և երկրին երիտասարդգներուն զշկնը տան կառավարութեգլխաւոր տեղը խրկեն . և հասարակագործութեան :

Ֆրիդրիխն և Ուաշգուտեն սեպտեմբեր 22 ին  
գրուած նամակները կը ծանուցանեն թէ շատ մը տ-  
ղատ գունդեր (հօթօ ֆունքօ) Պատենի երկիրը ան-  
ցած են . բայց շատ ալ պատենցի զօրք ժողվուած  
են Ֆրիդրիխի բոլորակիքը . և կը յուսացուի ո՞՛  
Պ . Հենիդէն և Պ . Շ գրուվ , որ ապատամբութե-  
գլուխ եղած են , պիստի տիրաման : Վ սնց գլու-  
խը ժողվուածները այլ և այլ ազգէ մարդիկ են .  
գերմանացի , ֆուանսըզ , իտալացի , և ուրիշներ .  
որնց խնատ շատը իրենց երկրէն փախստական ին-  
կած են հոն :

Բայով Պատեհնի գըստոթեան երկիրը, Խօսաւախէն զատ, Կասարեալ հանդարտոթեան մէջ է: Հասարակապետականները այս տեղի և լըի շրջանակ (ակրչլ բոր-լաք) ըստուած երկիրներուն հանդարտութիւնը աւրած են. Ըլինիէնէն անդին անցած չեն. բայց գտնուած տեղերնին անանկ յափշտակութիւններ և ուրիշ գեղշտիւններ կ'ընեն, որ մէկ տեղ մը ասոր պէս բան չեղաւ:

ՌԱԴԱՍԱՏԱՆ : Անպատեմբեր 10 ին Պետըրք  
բուրգեն գրուած նամակէ մը ֆուանսըզ օրադիր մը  
հետեւեալ լուրը կ'առնէ :

“ Քօլուա հիւանդութիւնը է փ աղէկ ակարացած իքէն այս օրերս նորէն քիչ մը սասականալու պէս եղաւ անցեալ շաբթօնան սկիզբները : Ու բռնուազներուն և թէ մեռնազներուն համբանքը օրէ օր եվենալու վրայ ըլլութ՝ հասարակութեան սիրտը երկիւղ մը մոռնել սկսու : Եւ որոշեաւ հիւանդութենէս մեռնազները շատը ստորին աստիճանի մարդիկ էին, աղնուականներէն և հարուստներէն քիչ կար, ձայն մը ելաւ որ այս հարուստները և աղնուականները բժիշկներուն կամքը հաճեցուցեր են որ աղքատները և ստորին աստիճանի մարդիկը գեղով թունաւորեն և մեռցնեն : Այս ձայնոյարդութիւն և հաստատութիւն գտաւ . հաւատացողները շատցան . և ստորին աստիճանի մարդիկ անանկ գրքառուեցան, որ բժիշկ մը տեսածնուն պէս կը նախատէին, կը հայհայէին . և չէ թէ մինակ բժիշկներուն ասանկ կ'ընէին, այլ և վրան գլուխը մաքուր և նորուկ ուլ որ տեսնէին նէ՝ ամէնուն ալ այս նախատինքս կ'ընէին : Անցած չորեք

շաբթի բաղմութիւն ժողվուեցան նելւ բրոսէեւ ըստած տեղը : Տօվկան զօրք բերել տոււաւ հան . բայց խոռվարաններն ուղ մարտկոցներ շննեցին , և քիչ ատենի մէջ երեք մարտկոց շննուեցաւ : Եթե որ զօրքը այս մարտկոցներուս վրայ կը դիմէին կայսրը Տէղ էրսհօֆէն հան հասաւ . զօրացը ըստաւ որ քիչ մը և տ կայնին . ձիէն վար ինջաւ և առջեւի մարտկոցին վրայ ելաւ . ժողովուրդ՝ ձեղի բան մը պիտի ըսեմ ըստաւ : Կայնհետասյն ժողովուրդը ծուն կի եկան . ձեռքերնին իրար բերին . վայելուչ ակնածութեամբ մը կայսեր ըսելիքը մտիկ ընել սկըսան : Կայսրը լսաւ . զնաւիներս , տօվկան աստուածային կողմէն մեղի խրկուած պատիժ մըն է . մեր ընելիքը՝ խոնարհութեամբ և հնազանդութը ասիկոց ընդունելին է . թունաւորելու խորքերը՝ ձեղ գրգուելու համար չարամիտ մորդոցմէ հնարուած սուտ բաններ են : Երկու հոգի ելան կայսեր ըստածին պատասխան պիտի տային . հասկըցուեցաւ որ խոռվարաններուն գլխաւորներէն են . կայսրը նոյն իսկ ժողովրդեանը հրաման ըրաւ որ երկու մարդը բռննեն . զօրացն ալ հրամայեց որ ամէն մարդի ձմերոցը երթայ , և ինքը ձին հեծաւ գնաց Ժողովուրդը այն երկու հոգին բռնեցին , իրենց ձեռօրը բօվկանին յանձնեցին , և ամէն խոռվարութիւն առնեաւածաւ :

— Պետքուրդ Հրատարակուած տէրութեան  
լըսդրոյն տուած լրոյն նայելու բլանք նէ՝ սեպմեմ-  
բեր 11 ին մեծափոռ կայսեր որդւոյն կասանդբի  
գբախն հարսանեաց հանդէսը եղած պիտի ըլլայ։ Ա-  
ռած աղջիկը՝ Սաքոսնիտ — Ըլդէնպուրի իշխանու-  
թեան հիմակուածն դուքսին աղջիկն է, որ ծնած է  
1830 ին յուլիսի 8 ին, և տարիի մըն է որ Պետքը

ԱԽՍԴՐԻԱ. Ենցած շարթու առանձին յաւել  
ուածով մը՝ Ա ի իէննա քաղաքը ելած խոսկութիւն  
նը և կայսեր Ա ի իէննացէն մեկնու Ե ինձ քաղաքը  
երթալը պատմելով համառօտ մը խոսկութեան  
պատճառը նշանակեցինք: Հոս քիչ մը ընդարձակ

պատմենք | ամսկերկ զօրապետին մահուանը պատճառը և պարագայները :

Ուաճառիստանու ընդհանուր կուսակալ Ամերիկայում մեծ գուքար պաշտօնէն հրաժարուելով, ամսիկրի կոմս զօրսավարը կայսեր առանձին հրամանագրով ընդհանուր կուսակալ անուանեցաւ Ամաճառիստանու, և Այս կոմին ալյանձնուեցաւ որ նոր նախարարներ ընտրէ :

Անգլուեմբեր 27 ին Պ. Քօշտառ Շէջթ քաղաքը  
մտաւ , և նոյն օրը ազգային ժողովցն խորհրդարա-  
նը գնաց , և պատմեց անոնց որ 12,000 կամաւոր  
զօրք մտերս Օկոլիքը կուգան :

Կայսեր թուղթը որով ամպէրկ կոմոք աճառ ոխտանու ընդհանուր կուսակիալ կ'անուանէր, կար-

սբանում լույս դառնուիր վրանակավագ ասումածեւ , ու սերական ստորագրութենէն զատ ուրիշ ստորագրութիւն չունէր : 1838 ին Վարտ ամաց մէջ գըր ուած կանոնին պայմանովը՝ Վարդքիսայի կայսրը Վաճառներուն ինչ հրամանագիր խրկէր նէ , Վաճառներուն ինչ չժժ գտնուած նախարարներուն մէկն ալ պիտի ստորագրէր : Այս հրամանագրիս վրայ ասանկ ստորագրութիւն մը չի գտնուելով անընդունելի հրատարակեցին . որով լամպէրկ կամսին այն թըզ-թովը առած պաշտօնն ալ ասօրինաւոր կ'ըլլար : Վակէց զատ այն ալ իմացուցին որ՝ թէ որ զօրաց հրամանատարութիւնը առնելու ըլլայ նէ , Վաճառիստանու սահմանագրական աղաստութեանը թշնամի և գաւառին մատնիչ կը սեպուի . և ով որ անոր օգնութիւն մատուցանէ կոմմ անոր հնազանդի նէ , անոր լանդանագր հազարդ կ'ըլլայ :

Ղամպէրկ կոմիսը 28 թն Բէշմբ մտաւ, և Պուտաքաղաքացը քաղաքացը տին պալատը գնաց . որ մէկ

կամուրջնը մը Ռէ շթի հետ հաղորդութիւն ունի : Քօշուդին խօսքերովը բազմութիւնը գրգուելավ զէնք առին կայսերական գործակալը փնտռուելու ելան . և զինուարական հրամանաւարին պալատին կողմը գային նէ՝ | ամայերի կոմու պրորդ քաղաքացին մը լայմեր հագնելով ծագաւալ փախու Ռէ շթմուա : Դաղմութիւնը ետեւէն ինկան . պալատը մտան . և ինչ թուղթ գտան նէ պտութատեցին ձեռքերնին անցածնին կոտրելով պատռելով կը ոչընչացընէին : | ամայերի կոմու կամուրջէն անցնելու ատենը | իէննայի Ակադեմեան | եգէոնէն մէկը Ճանչցաւ և պօռաց . ահա կայսեր կողմէն եկող մատնիչը, սպաննելու է : | յս ըսելով իւնիւրը մէկ մը կոմսին զարկաւ գետինը ձգեց . ուրիշները վրայ հասան որը կայինով որը նիղակով կտոր կտոր ըսին . և ծակէ ծըկած կարտած անշունչ մարմինը քաղաքին փողոցները պարացուցին : Վար համար էր որ կայսրը աղդային ժողովը աւրել, և խուռաաթներուն աղդապետ Պէտրավոր մաճառներու ալ ընդհանուր զօրապետընել ուղելով անցած շաբթուան յաւելուածին մէջ սպատմնած խոսվութիւնը ելաւ :

ՍՊԱՆԻԱ : Եղանակը ուժեան գլխաւորներուն  
մէկը՝ անուանին՝ Քաղքէրա, հաղար մարդով՝ Քաղա-  
գէլեն տէ Եմբունոս ըսուած բազմամարդ քաղա-  
քը մտաւ սեպտեմբեր 17 էն առաջ. և քաղաքին  
բերդը որ նոր շինուած էր՝ հիմնայստակ ընելէն զատ-  
որմագիրներուն (առու վարձիներուն) և ուրիշ բա-  
նուորներուն պատուիրեց որ՝ ով այն բերդը նո-  
րէն շնիելու ըլլոց նէ՝ անխնայ կը մեռցընէ :

— Խնկիւթիւն և Խպանիսայի մէջ եղած գժառութիւն-  
վերջ եղաւ խաղաղութեամբ այս կերպով։ Եյ-  
գը ժառութեան պատճառ եղաղ խնկիւթիւնի գեսալմելը  
Պ. Պըսուէր, որ հիմայ լ օնտուաէ, պիտի Վատ-  
րիս երթայ. թագուահին հետ պիտի տեսնուի  
մնաք բարով ըսէ, և առանց երկար առեն մնալու  
նորէն լ օնտուա պիտի գառնայ. և լ օւտ Շալմերա-  
գոն անոր աեղը մէկ ուրիշը գեսալան պիտի իրիկի  
Վատրիս :

— Քօռտօվլայէն Ախլիլիս մէկ չլրանցք մը պիտու  
շնինուի , որ վրայէն նաևով ճանապարհորդութիւն  
պիտի ըլլաց :

ԵՏԱԼԵՎ : Վենետիկի պաշտպանութեան համար սպառական կազմ 20,000 հազ. և 1,000 թիվայ

մար սրբագրաւուն զամ չ0,000 հարկ, և 1,000 լռ սրբագրաւուն հարկ, և եօթն կտոր նաւէ բաղկացեալ նաւախումը մը : Ասոնց համար ամսէ ամիս 3,000,000 լիազոր ծախք կ'պայ . (որ կ'ընէ 8,675,000 զուռուշ) . և Վէնէ տիկու հիմակուան եկամուտը 200,000 լիազոր (2,785,000 զուռուշ) կը հասնի ամիսը Վինչեւ հիմայ բնակիչներէն բռնի փոխ ստակ առ նելալ այս ծախքը եզաւ . բայց մինչեւ սեպտեմբեր մը :

վերջը , տալիք ըստու զարդարութեամ ալ լորջը զե  
գայ : Վէնէտիկէն քանի մը գործակալ ելան իտա-  
լիա ոլցութելու և փոխ արծաթ վնատը ելու . այ  
փոխաց վճարմանը երաշաւորութիւն կ'ընեն | օս  
պարտիա և Վէնէտիկ . և 10 միլեօն լիորաց  
թուղթ հանած են :

բաղմը ուրիշ տեղերուն բնակչացը խրատ մը եղաւ : | իբարի կզզին հնազանդեցաւ : Աէլացցօքն Աէսինա ծովու ձամբով հաղորդակցութիւնը նորէն հաստատեցաւ . Նօլո , Ճիռձէնդի և Քաղանո քաղաքները իրենց կողմէն պատգամաւորներ խրկեցին հընազանդութիւննին Աէսինայի կառավարչին ծանուցանելու համար . Բալէրմօքի մէջ մեծ շըշմկոց կայ : Պ . Յասսիսիպիէլ , Աէսինայի կառավարութեան գըլուխ ( պնդիչ ) անուանեցաւ . և ընդհանուր կուսակալին կողմէն մէկ յայտարարութիւն մը հրատարակեց . որով ամէն յանցաւորներուն ներում կուտայ խուզվութիւն հանող գլխաւորներէն զատ : Բաղաքն ու շրջակայ գիւղաքաղաքները աղատ նաւահանգիստ ( Բուրժ ֆունչո ) հրատարակեցան . որ Աէսինայի քիչ ատենուան մէջ նորէն ծաղկելու եւ շնչնաւու միջոց մըն է :

— Կնկիլիղն ու ֆռանսըլը՝ սիչիլիացիք ՚Նարօլիի  
թագաւորին հետ հաշտեցրնելու և պատերազմը  
գագրեցընելու ձեռք զարկին։ Նաբօլիի թագաւու-  
րը այս միջնօրդութիւնս ընդունեց այն պայմանավ՝  
որ յիշեալ երկու ազգի իրեն Աիշիլիայի վրայ ափրե-  
լու իրաւունքին հակառակ բան ընեն։ Եւ իրեն  
այս պահանջմանը պատճառ այն կը բռնէր որ ՚ ուու-  
հալմէրսդօնը երբ որ բառացիներին մէջ իրեն հարցը-  
ուեցաւ թէ ինկիլզի կառավարութիւնը Շէնօվայի  
գուքսը բալէւ մօցիներուն ընտրելով Աիշիլիայի  
թագաւոր պիտի ճանշնայ մի, պատասխան տուաւ-  
մեր կառավարութիւնը հիշ մէկը Աիշիլիայի թա-  
գաւոր չի ճանշնար, բայց եթէ այն որ իրօք թա-  
գաւոր ըլլայ : Կոկէց զոտ . Ուսւաց կայսրը 1845 ին  
խալիա եկած ատենը երբ որ ՚Նարօլի գնաց ՚Նարօ-  
լիի թագաւորին հետ ազէկ բարեկամութիւն հաս-  
տատած էին : Աիշիլիայի խուովութիւնը ելած տուե-  
նը ՚Նարօլիի թագաւորը Ուսւաց կայսեր հարցու-  
ցեր էր թէ Աիշիլիայի վրայ զօրք հանեմ մի, և ա-  
նիկայ պատասխաներ էր . հանէ . և թէ որ մէկ օ-  
տար տէրութիւն մը մէջ մտնէ, Աիշիլիա ինքնիշխան  
ընելու համար մէջ մտնէ նէ, ևս աւ զօրքով քեզի  
կ'օդնեմ քուկին Աիշիլիայի վրայ ունեցած իրաւուն-  
քըդ քալեցընելու համար : Ուստի այս անդամ որ  
՚Նարօլին Աիշիլիայի վրայ ծեծ բացաւ՝ ինկիլզի և  
ֆռանսըլի տէրութիւնը մէջ մտան չէ թէ իրթեւ  
տէրութիւն, այլ որպէս թէ սրտելինին Աիշիլիայի  
վրայ ցաւելով անոնք խեղջութենէ և թշուաւու-  
թենէ խնաեւու համար :

Բ ՐՈՒ ՍԻ Ա : Կառավարութեան նախարարները  
փոխեց թագաւորը, և նոր նախարարաց գլուխ գը-  
րաւ Պ. Ռ. Փուէլ : Պ : Վ բանկէլ զօրապետին ալ  
ընդարձակ և անսահման իշխանութիւն տուաւ քա-  
ղաքին ասլահովութեանը համար . որ Պէռլինու  
մատ 50,000 մարդով պատրաստ կը կենայ : Անպատեմ  
բեր 22 ին Պէռլինու մէջ գումարուած ազգային  
ժողովցն անդամներէն քանի մը հոգի այս բանիս  
արհաճութիւն ցըցուցին : Արամեկապետական կողմի  
կուսակիցներն ալ փոխցները թուղթ փակցուցին,  
որով ժողովրդեան կ'իմացընէին թէ ազատութիւն-  
նին և հայրենիքնին վտանգի մէջ է . որովհետեւ Պ.  
Վ բանկէլին տրուած զինուորական անսահման իշխա-  
նութիւնը բռնական կառավարութեան սկզբնաւո-  
րութիւնը մըն է : Եւ կը յորդորէին որ ամուր կենան.  
ազգային ժողովցն հետ միաբանին . նախարարաց  
խորհուրդը ցրուեն . մայիսի մէջ թագավորէն ա-  
ռած սահմանադրութիւնները քալեցընէն : Ազգային  
պահապան զօրքն ալ ասոնց հետ միաբանեցան . Պ.  
Վ բանկէլին տրուած իշխանութեանը դէմ բոլորը ը-  
րին : Անպատեմբեր 23 ին, հասարակութեան կողմէն  
մարդ գնաց Պ. Վ բանկէլին հարցունելու թէ թա-  
գաւորը ժողովրդեան շնորհած աղատութիւնը և  
սահմանադրութիւնները ե՞տ մի պիտի առնէ : Պ.  
Ռ. Փուէլ պատասխան տուաւ . թագավորը իր ըրած  
շնորհին մէկ կէ աը (նօխուան) անդամ ետ շառներ:  
Դէլու գիւղին բնակչաց կողմէն ալ անմիջապէս  
թագաւորին պատգամաւոր խրկուած էր նոյնը հար-  
ցընելու . և թագաւորը պատասխան տուած էր .  
շընորհածը ետ չեմ առներ . բայց սկզբունքներու  
վրաց հաւատարիմ կը կենամ . սահմանադրութեան

Հակառակողը ինձի ալ թշնամի կը սեպէմ։  
=====

ՉՈՒՏՑՑԵՐԻ ԴԻՔԻՆ ԳԱԼԱՊԻՆ | զւկանօքար  
զաքը տպուած առաջնակո օրագիրը սեպտեմբեր 23  
ին և 24 ին թերթերուն մէջ կը պատմէ։ Վերսահման-  
ներուն բոլորտիքը աւասդ բիացի զօրք կը ժողվածին ։  
Կ'երեւի որ Ռատեցքի Դիքին գալապին այցեւ-  
լութիւն մը ընդունելու միտք ունի։ Յօնդօ Վոս-  
քօդէ տեղը՝ որ ասլորաբար ութը կամ տասն զին-  
ուոր կը գտնուէր։ Հիմայ մէկ ամբողջ գունդ (պա-  
տավանէ) մը զօրք կայ։ Այս առտու հինգ հատ  
մէծ նաւակ բռնեցին մէջը նայելու համար։ Առ-  
նինօյի սահմաններէն մինչեւ Աշճիալէի սահման-  
ները 6000 հսկիէն աւելի զօրք կայ։

Դաշնակցութեան ժողովը ուղղիչ ատեանին  
առաջարկել վճռեց որ՝ Օռուիցցէրիի դաշնակցու-  
թեան կողմէն Ա ինքնա նստող գեսպանին ձեռօքը  
Աւսդրիայի կառավարութեան բողը ընէ Ուայուց-  
քը Ո՞արէշալին բռնած խիստ ճամբուն վրայ . և  
ուզէ որ անմիջապէս անոր ըրած կարգադրութիւն-  
ները ետ առնուին . Դաշնակցութեան կողմէն ալ  
երկու պատգամաւոր պիտի իրկուի Դիշնօ , որ  
Օռուիցցէրիի իրաւունքին դէմ բան մը ըլլայ նէ  
պաշտպանութիւն ընեն :

# ԵՐԱԾ ԵՅԻՒ

Արմաշու վանքին մէջ ուստումնարան մը գըտ-  
նուիլը, և այն ուստումնարանին բոլոր Դղնիմիտու-  
բաղմամարդ վիճակին բարոյական և մտաւորական  
կրթութեանը որբան հարկաւոր ըլլալը լրագրսունա-  
խնիմիտաց թերթերուն մէջ քանի որ առիթ ունե-  
ցած եմք նէ պատմեր եմք :

Ո՞Եծ ուրախութիւն եղաւ մեզի, երբ որ Գերապատիւ առաջնորդ Տ. Ատեփաննոս Վըքէպիսկոպոսին և նորին հոգեցնորդ փոխանորդ Տ. Ատեփաննոս Վաղարքեան իմաստուն վարդապետին, և յիշեալ ուսումնարանին առաջին դասասուլ Պ. Յովհաննէս Վալինեանին առանձին գրերովը իմացանք նոյն ուսումնարանին աշակերտացը յառաջադիմութիւնը, և աշակերտաց գրուածներն ալ վայելեցինք. որ սեպտեմբեր 29 ին եղած պարգևաբաշխութեան հանուէսին գտնուող հանդիսականացը ներկայացուցեր

Արժանացարգ գերասպատիւ առաջնորդը յուլիսի սկիզբները շարունակ հինգ օր ուսանողաց յառաջադիմութեան մասնաւոր քննութիւնը ըստ էր վանքին միաբան իմաստուն վարդապետաց, և վեճակեն և դուրսերէն գտնուող ուխտաւորաց ներկայութեամբը, (որ ամսուը ամէն ատեն անպակաս ուխտաւոր կը գըտնուին) : Պարգեւաբաշխութեն հանդէսն ալ այն օրէրը պիտի լլազր բայց չէլլազր հիւանդութեան այն կողմէրը սաստկանալը սափակեց որ այդ հանդէսը ուրիշ յաջող ժամանակի մը մնաց

Ամէն տարի սովորութիւնն է որ Վարագոյ Խաչին տօնախմբութեանը ատենք շրջակայ վիճակին բէն երեւելի իշխաններ կը գտնուին հոն, որ վանքին տեսուըն են . և այս տարի ալ հոն գտնուելով նին այն շաբաթուան շրբեքաբթի օրը սեպտեմբեր 29, պարզեւաբաշխութեան հանդէսը եղաւ, ուստիմական աշխակերտայ աշխատաւթեան պաղցն ալ քիչ մը ճաշակը հանդիսականնոց ցըցընելով . որոնց հետ քանի մը թէ կոստանդնուպօլէն, թէ Կոստանդնուպօլէն, և թէ ուրիշ տեղերէն ուստիմականութեափ էն անձնին կառանկան :

Հանդէսը եղաւ ժամերգութենէն ետքը վեհա  
բանի մեծ սենեակը, ուսանողք կարգաւ հոն ժող  
վուելէն ետքը միաբերան մեզմ ձայնով երանելի  
Նարեկացւոյն այն տղօմքը երգեցին, որ կ'ըսկըսի.  
“ Ազաշեմք զանփափախէլի տէրութիւն ամենակալ  
հոգւոյդ հօրին : Ազօմքը լըմբնալէն ետքը աշո-  
կերաներէն մէկը, Պ. Խաչատուր Յնորսեան, ճառ-  
մը զրուցեց, որուն օրինակը թերթիս մէջ  
գրինք : Այս Պ. Խաչատուրը մէկ 14 կամ 15  
տարուան տղայ մըն է . բնիկ Ատաբազարու  
վիճակի նոր գիւղէն . ճառը ինքը շարագրած ըլլա-  
լը կը վկայեն յիշեալ վանուց փոխանորդը Տ. Ստե-  
փաննոս հոգէնորհ վարդապետը . և ուսումնարա-  
նի դասապաւն : Այս ճառը նոյն իսկ հեղինակը գր-  
րաբար ալ թարգմաներ է . բայց հանդէսին մէջ աշ-  
խարհաբարը զրուցուած ըլլալըն համար մէնք ալ  
անիեան հռատարակեալինք :

ասրպոյ հրաժարակն լիւթ :  
Անկեց ետքը ուսանողաց սորված և հետեւած  
ուսմունքներն ունեն վրայ քանի մը հարցմունքներ ըլք  
լովեն ետքը՝ որ մէջ ընդ մէջ երգեր ալ կ'եռքէին  
տղայք, սպազմական վրբազան Արքեպիսկոպոսը իր  
ձեռոքը շնորհեց : Թէ յուլիսի սկիզբը և թէ հի-  
մակուտան քննութեան մէջ աւելի աղէկ հանդիսա-  
ցովներուն անուններն ալ կը գրեն . որ են Պ. Ար-  
մեն Արշաւիր Յարութիւնեան . Պ. Խաչատուր  
Միքան Թարուսեան, Ճառին հեղինակը . Պ. Յարու-  
թիւն Վարդիկ Սամեփանեան . ասոնք առաջին դա-  
սէն : Խակ երկրորդ դասէն ալ Պ. Գէորգ Վահան  
Կարապետեան . Պ. Թագեւոր Շէննէթեան և Պ.  
Գրիգոր Յովակին Մինասեան : Սորված ուսմունք-  
ներնին են Հայկաբանութիւն, Արքազան և ազգա-  
յին պատմութիւն . Թառաբանութիւն . Քրիստո-  
նէական Վարդապէտութիւն . Տրամաբանութիւն,  
որուն հետեւողներն են միայն առաջին դասու  
աշակերտները . Աշխարհագրութիւն . և Խտալերէն:  
Դաղղիներէնի դասաստունին նոր դացած ըլլալով՝ որ  
երկու երեք ամիս հաղիւ կար երթալր . այս լեզ-  
ւիս քննութեան ելլելու չափ բաւականութիւն  
չունէին աշակերտները, բայց Խտալերէնի բաւական

Հըմուտաներ կան . որոց թարդմանութիւնները կը  
խստանամբ ատեն ատեն լրագրոյս մէջ տպելու :  
Հանդէսին վերջը Արքաղան առաջնորդը ատենա-  
խօսութեամբ օրհնեց ուսումնարանին տնօրէնը,  
Հոդաբարձուն , դասատուները , և ուսանողները  
և հանդիսական յարդոյ աղաներէն և ամէն առաջի-  
կոյ գտնուողներէն շնորհակալ եղաւ , և յորդորեց  
որ այդ օդտակար գործը առաջ տանելու ամէնն ալ-  
ձեռնոտու ըլլան : Մէնուն ակն յայտնի երեւեցաւ  
որ այն ուսանողները ամէն մէկը բան սորվելէն ետ-

Քը իրենց հայրենիքը երթարսվ այս տեղներուն լուսաւորութեանը առիթ պիտի ըլլան . Վարդապաղարունոր գեղը անգամ, որ 15 տընուոր գեղմընէ, և գերապատիւ վառողապետ Տամէան Յովհաննէս ամիբային շնորհիւը հիմայ դպրատուն մըն ալ ունի, ասկէց քանի մը տարի ետքը իր գիւղացիներէն հասցուցած վարժապետ մըն ալ պիտի ունենայ վերոյիշեալ Պ. Խաչատուրը, որուն հիմակուանի տղայական հասակը ուսման պարապելով անցընելը իր գիւղն անհամեմատ օդուտ պիտի բերէ : Եւ ասով

յիշեալ բարեացապարտ ամիրային այն փոքրիկ և  
աղքատ գիւղին վրայ ըրած բարեարութիւնը սիւ-  
տի անմահանայ, և օրէ օր աւելի պիտի արդիւնա-  
ւորի :

Պարգեւածաշնութեան հանդէսէն ետքը՝ ու-  
սումնարանի տնօրէն չնորհազարդ Ախքայէլ վարդա-  
պետը, բնիկ Լալօվայի Չենկիւլը գիւղէն, իւր  
պաշտօնէն հրաժարիւ առաջարկեց Արքազան առաջ-  
նորդին և ժողովական յարգելեաց. բայց աննոք աւ-  
սոր խոհեմ կառավարութեանը և տնօրէնութեա-

Նը ժամանակը հասցուցած պտուղները տեսնելով  
և վայելելով, որ իր հայրօրէն խնամքը անխտիր ա-  
մէն ուսանողաց վրայ տարածելով չէ թէ զինքը միայն  
այլ նոյն իսկ ուսմունքը այն մատաղերամ մանկանցը  
սիրելի էր ըրեր, և աղեկ գատելով որ անանկ մէկ  
ուսումնարանի մը ասոր պէս ամէն կողմէն յարմար  
ջանասէր տնօրէն և խնամածու գտնելով դիւրին  
բան չէ, աղերսելով հաձեցուցին որ այն պաշտօնէն  
չհրամարի . որովհետեւ գործը խանգարելու վտան-  
գի մէջ կրնար ինալ: Հոգէ չնորհ փոխանորդն ալ  
իւր պաշտօնէն հրամարի խնդրեց . բայց անոր ու  
աղաւնեցին որ այս պաշտօնս ինչպէս որ մինչեւ հի-  
մայ վարեց, ասկէց ետքն ալ վարելու յանձնառու-  
թաց . և այն ալ նոյն գործոյն վրայ վերստին հաս-  
ատուցին :

Ասոնց երկուքին իրենց առաջին պաշտօնին վրաց  
հաստատուելը՝ պատիւ կրքերէ չէ թէ միայն ասոնց  
աղէկութեանը, որ իրենց յանձնառու եղած պար-  
տականութիւնը ըստ պատշաճի կատարեր են, այլ  
և սրբազն առաջնորդին. և վանքին բոլոր միաբա-  
նութեանը իմաստապերճ և խոհական վարդապետ-  
ներուն, և յարգի իշխաններուն. որ ասոնց յարգը  
ձանցեր են. և հասկցեր են որ ասոնց մէկին, այ-  
սինքն փախանորդին իւր պաշտօնին վրաց շարունա-  
կելը վիճակիներուն բարոյական յառաջադիմութեա-  
նը մէծ օգուտ է. և միւսոյն, այսինքն ուսումնա-  
րանի անօրէնին նոյն գործոյն մէջ գտնուիլը ուսում-  
նարանի աշակերտաց, և հետեւաբար բոլոր վիճա-  
կին մասւորական յառաջադիմութեանը օգուտ է.  
և ասոնց երկուքին ալ հրաժարիլը անդարման էլի  
կարուստ է :

" Բարձրութիւն իմաստնոց , փրկութիւն աշխարհայ ո : ( Ամառ . պ. 26 ) :

Ու շախում չեղարձ ի գալաք, պատ և  
նախագահի իմաստնախումը կածաւիս, ով Արքաս-  
նելոց գումար հագեւորական դասուց, ով ազգա-  
խամ ժողով Պարոնայց հարազատ սերնդոց շայի-  
եան քաջազանց, ով Քրիստոսի ժողովրդեան գը-  
լուիք և հովիւք, տանն թորդոմայ վերակացուք և

Ներս, որպէս զի կատածոյ տուած չնորհօքը փոքր  
ի շատէ խօսիմ իմաստութեան օգտին և տգիտու-  
թեան վեստուն վրայ, յիշելով առաջինի և իմաս-  
տուն նախնեացս յաւերժական յիշատակաց արժա-  
նի և առէտ և չարարուեստ անձանց տրամադիթ  
և վնասակար գործքերը, փափաքելով՝ որ բոլոր հա-  
մազգի մանկանց մանաւոնդ իմ սիրելի աշակեր-  
տակցացս մասադ սրտին մէջ, վասնական առաջի-  
նութեանց սէրը և բնդդէմ մոլութեան պէտք ե-  
ղած ահաճութիւնը և ատելութիւնը հիմակուլնէ

արմատանայ և տպաւորուի :  
Իրաւ սր շատ երջանիկ գարերու մէջ երեւելլ  
ուժութեանական թագաւորներ և իշխաններ երեւցան  
աշխարհիս մէջ, սրոնք թէ իմաստուն և իմաստաւ  
սէր, թէ հարուստ և թէ մեծամեծ իշխանութեց  
տէր մարդիկը ըլլալով, և իրենց իշխանութիւնն ալ  
զանազան գիտութեամբ և արտեստիւք յառաջ  
տանելով, և աղքերնին պայծառացընելու և լու-  
սաւորեալ ազդաց կարգը սեպելու գործածելով,  
խիստ քիչ ժամանակի մէջ իրենց ազդին և քաղա-  
քին պարծանիք և առաջնին բարերարը սեղուեցան .  
և իրենց անունը աշխահքիս վրայ անմահացուցին :  
Բայց ասոնց մէջ ալ իմաստութեամբ շատ աւելի  
գերազանցեց գերահամբաւեալն իմաստութեամբ  
մեծիմաստն Աղջմոնն Դաւիթթ աստուածահայր մար-  
գարեին որդիին, սր իրեն հայրենական առաքինու-  
թեանց հետեւելով շատ սիրելի եղաւ Վատուծայ .  
որուն համար ինքն ամենաբարին ալ անոր այնպիսի  
իմաստութիւն շնորհեց, որուն հաւասար ոչ ունե-  
ցեր է մէկը և ոչ պիտի ունենայ . հարստութեան  
կաղմանէ աշխարհքիս մէջ միմիայն գտնուեցաւ ,  
պատասխանատուութեան մէջ ալ քաջ, և նորա-  
լուր իմաստից մէջ յաջողակ և աշալուրչ : Ենոր  
համար շատ հայակաս թափաւորներ և իշխաններ  
գալ տեսնալու կը փափաքէին, որոնց մէկն է Առ-  
բայ հարուային թագուէին, որուն տեսածները լո-  
սածներին աւելի էր : Եւ այսպիսի անքաւ իմաս-  
տութեամբ Հոգւոցն սրբոց շնորհօքը լուսաւորուե-  
լով գեղեցիկ իմաստնալից և հռչակաւոր խրանելը  
ալ յաւիտենական յիշատակ թողուց բոլոր քրիստո-  
նէցից եկել զեցւոյն, բայց այս խրատուց մէջ ալ աւ-  
ւելի սիտամնի և կարեւորը կրնայ սեպուիլ այն թէ  
« Շաղմութիւն իմաստնոց, փրկութիւն աշխար-  
հաց » :

նելու խիստ գեղեցիկ հանդերձը . թագաւորաց լուսածաճանչ ձորձը . ինքնակալաց յակինթ քարերով զարդարուած թագը , զի արդարեւ աշխահքիս մէջ Բնչպիսի առաւել օգտակար և մարդս առաքինի ընող էակ կայ , որուն ամէն քաղաք և ամէն մարդ առաւել կարօտութիւն և ցանկութիւն ունենայ : Ո՞ր երկրի կամ ո՞ր քաղաքի և գաւառի մէջ իմաստուն մարդ անպակաս եղած է նէ կ'ըսէ , յայտնի է թէ այնպիսի տեղերը անսոնց խելքով ամէն թըշնամիներէն աղաստ մնալով խաղաղութե՛ և հանգըստութեան մէջ կը բնակին . զի որ թագաւորը՝ որ իմաստութիւնը իրեն աթոռակից այսինքն իմաստուն մարդիկ իրեն խորհրդական ունեցեր է , և իշխանութիւնը իմաստութեամբ վարեր է նէ , անկէց իրեն տերութեան շատ օգուաներ քաղեր է : Ըստ իրաւունք ունէր զուրցելու այս խօսքը իմաստունը , որն որ քաղմակիսի փաստերով կրնանք հաստատել . քանզի մենք աշխարհքիս վրայ ասկէց աւելի

բապէս մարդոս որ աշխարհքիս վրայ կ'ապրի նէ ա-  
նոր հիման վրայ հաստատուած է : Կ առ մեհափառ  
թագաւորներ մարզպաններ իշխաններ զօրավարներ  
և մինչեւ քաջաքի և գիւղի տէր մարդիկ տուանց  
անձնական զօրութեան կամ քաղաքացիութեան իմաստու-  
թեամբ հաստատուն պահեցին իրենց տէրութիւ-  
նը, և իրենց իշխանութեան հնազանդեալ ժողո-  
վուրդն ալ թշնամեաց ձեռքէն փրկեցին . անմթիւ-  
մեծութեանց բարութեանց և յաջողութեանց հան-  
գիպեցան . անհատնում գանձուց տէր եղան . ա-  
մէն իրենց գէմը եկած ձախորդութեանց յազգթե-  
ցին : Վանաւանդ ասովլ մէնք ալ մեր արտօքին հոգ-  
ւով պատկեր ըլլանիս կ'իմանանք . ասովլ բարի գործ-  
քեր գործելով լուսուծուծոյ հաճելի կ'ըլլանք, և մար-  
դոց առաջ պատիւ կը գտնանք : Վհաւասիկ ասոնց  
ամէնուն պատճառն ի՞նչ է ոլյարգելի անդամք  
պատկառելի ժողովցա . չլու որ միմիսայն այն իմացա-  
կան էտիլս այսինքն իմաստութիւնն է : Ինչու որ ինչչ  
պէս ինքն իմաստունն ալ կը վկայէ : Վսիկայ այսինքն  
քըն մարդկացին իմաստութիւնը լուսուծոյ իմաս-  
տութեան հետ կապակցութիւն ունի, և անոր  
գէնցեցիութեանն միշտ ցանկացող է . և անոր պը-  
տուղը առաքինութիւն է . ինչու որ արդարութիւ-  
գիսութիւն և մարդուս կենաց աւելի պիտանի ե-  
ղածը կը սորվեցընէ . մինչեւ անդամ անոր հետ  
բարեկամութիւն և ազգականութիւն ընելլ ան-  
մահութիւն է : Վյլ բաւականութիւն ունինք

արդեօք մի առ մի յիշել ձեր ազնուութեանը անոր  
մէն յաւաջ եկած օգտակար բաները, զի ամէն բան  
անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ . այ-  
սինքն թէ աշխահքիս մէջ ինչ բարիք որ կան՝ ա-  
մէնքն ալ իմաստութեամբ գտնուած են, առանց  
անոր բնաւ բարիք մը գոյացած չէ :

Ուրեմն յայտնի եղաւ ով ժողով վեհից, թէ ինչ  
չու համար իմաստութիւնը աշխարհքիս փրկիչն է  
կ'ըսենք . բայց տեսնանք թէ ով անոր յարդը և  
պիտուականութիւնը ձանցաւ, ով անոր գործա-  
դիրը ըլլալով գեղեցիկ և օգտակար պրուզը ըստ  
արժանեցն վացելեց : Իրաւ որ շատ մորդիկ գըտ-  
նուեցան, որոնց մէկ քանին յիշելով՝ գիտեմ թէ  
ձանձրութիւն պիտի չլ պատճառէ ձեր գերար-  
գելեաց, մանաւանդ որ գուք այսպիսի իմաստնոց  
վարքերը լուրջու շատ յօժարութիւն ունիք : Խըս-  
քանչիւր աղդաց մէջ ուսմունք աճելու նախապատ-  
ճառ եղաղ մարդիկներուն փառքը և երախտիքը  
շատ մեծ է . բայց անոնց մէջ ալ պիտի չլ մոռցուի,  
Պերիկլէսին Յունատանի մէջ . Պաղսմէսոսին Յ;  
գիտոսի մէջ . և Օդատոս կայսեր Հուսնաց մէջ  
թողուցած անմահ յիշատակնին, որոնք ի սկզբանէ  
իմաստութեան լուսը իրենց առաջնորդ բռնելով  
կրծութեանց մէջ շատ յառաջացան, իրենց տե-  
րութիւնը զանազան բարեկարգութեամբ զարդա-  
րեցին, և շատ երկրի տէր եղան : Ալ ինչ կրկնեմ  
կենամ ձեր յարգելեաց օտարազգի մարդոց անձա-  
նօթ անունները : Հին առենց մեղի ալ մեր աղդէն  
երախտաւոր չի գտնուեցաւ մի . չի որ մեր տչա-  
լուրջ նախարարները և նահապետները աղդը խռո-  
վութեան մէջ եղած ժամանակն ալ հոդ տարին աղ-  
դը հանդստութեան մէջ պահելու . որով աղդին  
մէջ ալ ըստ բաւականին ուսմունքները և դպրու-  
թիւնները յառաջացան . որոնց մէջ երեւելին կը ը-  
նայ սեպատիլ վեհազն Վրամ հռչակեալն յամենացն  
ազգու, որուն ուսումնասութեան և հայրենասի-  
րութեան մէկ հատիկ ապացոյն է այն, որ իրեն  
հպատակնեալ ժողովովոյը հրաման տուաւ հայերէն  
խօսելու . Երբ որ կը յիշենք Ամրատ բազմութղթին  
ըրած հայրենասիրութեան, և ուսումնասիրութե-  
գործն ալ, կարծես թէ նոյն Վրամայ քաջն աղդա-  
սիրութեան տրիւնը անոր վրայ կ'եւայր, այնպիսի  
հայրենասէր անձն՝ որ իրեն աղդակցաց խեղճու-  
թիւնը իրեն կը սեպէր, բանզի տեսնալով՝ որ Վը-  
կանայ երկրին մէջի աղդակիցքը հայերէնը բոլըրո-  
վին մոռցեր էին հրաման տուաւ տրիւցնելու . ա-  
նոնց ձրի ուսուցիչ իրկելով Բայց առելի կատարելուի  
պիտի տեսնանք բազմահմուտ Վրիգոր Ապդիսորո-  
սին գործոց վրայ, և շատ զարմանք պիտի գայ մե-  
զի, որ թէպէտ աշխարհական իշխանութիւն ունե-  
նալով աշխարհային զբաղմանց ազատ չէր, բայց ին-  
քըն հայրենասէր և ուսումնասէր անձ մը ըլլալով  
թէ աստուածային և թէ երկրաւոր գիտութեան  
շատ սէր ունենալով շատ երեւելի յառաջադէմ ա-  
շակերտներ հանեց . որով աղդին ալ բարեկարգու-  
թեան և պայծառութեան առիթ եղաւ . Կնանկ  
կրօնատէր և բարեսրաց որուն աշակերտներէն շա-  
տերը կրօնատուրական վիճակին ցանկալով աշխարհք  
արհամարեցին, և իրենց մարմնական յօժարութեան  
յաղթելով խացը ուսերին առած Վրիտոսի հետ  
քերը համբուրեցին : Կը թողում առ տեղ յիշելու  
Հայոց ուսումնասիրութեան հին արձանները . քա-  
ջն Տիգրան և Վաղարշակ . խոհեմն Վբգար . աշ-  
խարհաշէն Վրտաշէս, ահեղաղօրն Տրդատ . մեծ  
հայրապեան Աերսէս, կամ աւելի աղդը պայծառո-  
ցնող, բարեացալարտ արքայն մեր Վաամշապուհ,  
ուուրբ հայրապեան Ամհակ, զգօն վարդապետն  
Վեսրովդ, որոնք աղդին բարելաւութիւնը և յա-  
ռաջադիմութիւնը իրենց նպատակ բռնելով . իրենց  
արժանագով վաստակով մեղի քաջալեր և օրինակ ե-  
ղան, և իմաստութեան լուսայն ճրագը իբր աշտա-  
նակի վրայ կառուցանելով Հայկազեան տոհմին  
տանը մէջ հաստատեցին :

ռաջ տանելու կը գործածեն . չէ թէ միայն իրենց ազգին՝ հայք ուրիշներուն ալ բարեբար պիտի սեպ ուին, ինչպէս տաջի ժամանակներս շատ ուսումնասէր մարդիկ գտնուեցան, որոնք ձշմարփու հայրենասիրութեան ոգւով վառուած . իրենց աննախանձ բարեբարադութեամբը, հաստատուն ուսումնասիրութեամբ, անդրդուելի աստուածպաշոութեամբ, որը իւր գանձէն դպրատառն բանալով, և որն ալ իւր ծախիւք աղջին յիշատակ աղէկ գիրքեր տպել տալով, և որն իրեն մահուանէն ետքն աղքատաց և որբոց շատ բան կտակ թողլով, այնչափ անհամար շրմանց գովելի են, և այնչափ սրտից սիրելի և պաշտելի .

Աւքեմն պիտի խնդա՞ Հայաստան երկիր, պիտի  
գուարձանայ Արարոտ գաւառը, արդիւնաւորի  
պիտի. լուսաւորչայ և այլ երանելի հայրապետաց

մերոց գերազանց աղօթքը , և պիտի պարծի մեծաց  
պէս , որ ինքն թէպէտ ուրիշ զօրաւոր ազգաց պէտ  
բաւական կարողութիւն չունի , և աշխարհքիս ե-  
րեւը ցիր և ցան եղած է , բայց այս ժամանակիս  
իւր ազնուական սրդիքը՝ իրենց նախնի հայկազուն  
սուրբ Հարց ազգասէր հոգին գործածելով , անոնց  
հոգեւոր առաքինութիւնները և կատարելութիւնները  
անխախտ կը պահէն , անոնց սդալի յիշատակները  
ուրախութեան կը դարձընեն : Ուրեմն ճշմար-  
տութեամբ զուրցեր է Աիրաք իմաստունն ալ թէ  
“ Քաղաք յիմաստութենէ իշխանաց շինեսցի ո : Եւ  
յիրաւի որ՝ ահաւասիկ այս ազգասէր ազնուակա-  
նաց իմաստուն խորհրդոց և ջանից պատուղն է որ  
ազգերնիս թէպէտ իշխանութեան կողմանէ ալ չէ ,  
բայց գիտութեան և կրթութեան կողմանէ քիչ  
քիչ ուսեալ ազգաց կարդը մանելու վրայ է . ասով  
է՝ որ ուրիշ ազգեր հիմայ վրանիս առ ջի արհամար-  
հոտ աչքով չեն նայիր . ասով է որ Հայոց ազգը  
ասիսկսն ազգաց մէջ ինչպէս առաջ հիմայ ալ իբ-  
րեւ կատարեալ կրթեալ , իբրեւ կատարեալ քա-  
զաքագէտ , անոնց ամէնուն առջեւ նախագահ պի-  
տի նախի : Տեսնանք հիմայ թէ տգիտութիւնը ինչ  
պիտի չար է , առենեանք թէ անոր հետեւանքն ալ  
ինչ է , զի բառ իմաստնացն թէպէտ՝ իմաստութեամբ  
չինի առուն և հանձարով կանգնի . այլ անմտութը  
կործանի . զի բառ Աւրիալիդէ այ անուսումնութիւ-  
նըն անհնարին չար է : Վզգերնիս որչափ իմաստու-  
թեամբ նախնեաց և արդեաց պատոմնութեան մէջ  
երեւելի եղած ալ է նէ , անոր վառաց նսեմութիւ-  
տուսով տգիտութեան քանի մը պարագայներն ալ  
պակաս եղած չեն :

Ուէ որ մէկ անգամմը տչքերնիս վերցընենք և  
զմեղ նայելու ըլլանք, կը տեսնանք որ մէր հայրե-  
նեաց շատ հեռանալով օտար և անձանօթ երկիր  
ցըսուած ենք բոլորս ալ, և մէր քաղաքներն աւ  
հրամայատակ կործանեալ շնուրածաց մնացորդները  
կը տեսնուին, բայց ասոնք ալ թողունք մնպով գանք  
նայինք անհամոր մեծաշուք եկեղեցեայ փառաւոր  
շնորքերուն և մէջի եղած զարդուց կտորները, թա-  
գաւորուց շքեղ սովարանքները, ընդարձակ սրահ-  
ները, բարձր և հաստատուն պարիսպները, ասոնք  
բոլորն ալ հայկազմնց մեծութիւնը և փառքը կը  
հրոշակեն. որոնք մէր քաջ դիւցազունք առաջուց-  
իրենց արեամբը պաշտպաննեցին. բայց հարցընենք  
թէ ինչ էր իրենց այս թշուառ վիճակիս մէջ իյնա-  
լլ. Կը յուսան որ միշտ բռնաւորաց անգթութիւ-  
պատճառ են, կը յուսան որ միշտ ժամանակին դըմ-  
բազդ պատահարները իբր պատճառ առաջդ բերեն-  
չէ չէ, ըստ մեծի մասին գլխաւորաց անմտութե-  
նէն եղաւ պիտի լըսես, որոնք ժամանակին պարա-  
գայներուն չդիտելով մեծամեծ սխալմանց մէջ ին-  
կան, վիաս կրեցին և կործանեցանք : Աւաղ քեզի  
լրարատեան երկիր մէր ծննդեան սիրելի և անմահ  
մայրը :

Արդեօք Բնէն կըսեն օտարազգիք . մէկ կողմէն  
հայոց ամբաւ շինուածքը . և մէկ կողմէն ալ մեր  
անհոգութիւնը տեսնալով չէն պարսաւեր մի . և  
մեզի ալ մեծ ամօթ չէ , որ մեր հայրենեաց վրայ  
ուրիշները մեզմէ աւելի հոգ ունենան : Բայց այս  
պէս ըլլալովն ալ պիտի գանդաղինք մի այս անհո-  
գութիւնը մեր վրայէն վերցընելու , չէ չէ , ձեռ-  
քերնուս և կածին չափ օգնութիւն պիտի ընենք աղ-  
գին . և ըստ կարի աղգին պայծառութեան առիթ  
պիտի ըլլանք , որուն ուրիշ հնար չկայ բայց եթէ  
կրթութեան դպրոց բանալ , և մանկունքը բարե-  
պաշտութեան աստուածպաշտութեան և երկիւ-  
ղածութեան մէջ կրթել , որոնք ամէն իմաստութե-  
սկիզբն և հիմն են , ինչպէս որ գերահրաշ իմաստու-  
նըն ալ կը վկայէ « Ալիզըն ամենայն իմաստութեան  
է երկիւղ տեսան » : Ուրեմն հայրենակիցք իմ .  
մէնք ալ ըստ օրում մեր նախնեաց հարազատ որդի-  
քըն ենք անոնց նմանինք . անոնց պէս աշխարհիս վր-  
այ անմահ յիշատակ թողելու ջանք ընենք . և ո-

բրոլիքնետեւ ասոնք ալ միոյն իմաստութեամբ կը լըս , իմաստութեան ծառին մօտենանք , հայրենեաց փառաւորութիւն և լուսաւորութիւն տուող իմաստութիւնը մեր վրայ թագաւորեցնենք . զի մեր գոյութիւնն ալ կեանքն ալ անոր վրայ հաստատուած է : Եւ ըստ որումն Որբազն հայր , և յարդամեծար ազգախնամ Պարտնայք , դուք էք աղդին գլխաւորը . բարձրեալը ձեզ է յանձնած իր ոչ խարներուն խնամքը և հոգը , պարտականութիւնն ունիք ազգին մէջ ազգօդուած ուսմունքներ մըսցը նելու , դուք առաջին յորդորիչ և սկզբնաւորիչ ըլլալով :

Եւ գուք համա աշակերտանի կիցքդ իմ առաքինիք որդեգրեալք կուսին, և հայաստանեաց եկեղեցւայ սիրելի որդիք, և՝ հարազատ աշակերտ սրբաւուխուս, գիտոցիք որ թէպէտ շատոնց այրարատեան տանը մէջի կառուցեալ իմաստութեան տաճարը կործանեալ ըլլալով, ինքն ալ անոր սահմանէն գուրս

ելած հեռացած ալ էր նէ , հիմայ անդրէն գալով  
բնակելով նոյն տանը մէջ իբր ծիրանեփառ թագաւ-  
որ իրեն կը հրաւիրէ զձեղ ասելով “ ահաւասիկ  
ես արմատացայ ՚ի փառաւոր ժողովոդեան , ոստք  
իմ ոստք փառաց և շնորհաց , մատերուք ամենեւ-  
քեան՝ որք ցանկացեալ էք ինձ և յարմտեաց իմոց  
յագեցարուք ” : Աղէ քաջութեամբ վաղեցէք անոր  
քով , և հաւատարիմ և երախտահատոց գլունուե-  
ցէք զձեղ նախախնամով լուսուծուծոյ ձեր բարերա-  
րաց և վաստակաւորաց , և միանդամայն կարօւեալ  
ազգին : Դուք որ հիմակու հիմայ գպրոցաց մէջ  
զանազան գիտութեանց կը պարապիք , աղէ կ պիտի  
գիտնաք ձեր պարտաւորութիւնը և լուսուծմէ ե-  
զած յատուկ շնորհքը . և ամենեւին պիտի չվերջ-  
նուոիք ձեր եղարց գիտութեան պակասութիւնը  
լեցընելու : Ենթանի ձեզ՝ զի շատ մորդիկ կը ցան-  
կան ձեր վիճակին , և ձեռք ձգելու իրենց անձն ալ  
կը զսհեն թէ որ հնար ըլլայ , և դուք անաշխատ կը  
գլունաք . ուրիշները հեռուանց կը տեսնան , դուք  
նոյնը կը վայելէք . անոնք միտյն անոր քաղցրութիւնը  
կ'իմանան , դուք փորձով կ'իմանաք և կը ճաշակէք :  
Քաջալերեցէք հիմայ քաջալերիցէք ու ուսումնա-  
վարժ աշակերտակիցք իմ . առանց մէկ վայրկեան  
մը կորալնցընելու ուսման պարապեցէք , քանզի քըր-  
տանց և վաստակոց պատշաճաւոր ժամանակը քիչ  
է , և յաւեժական և քաղցր են անոր պտուղները .  
ու բարեբաղդի հանդիպեալ դարու և վիճակի ման-  
կունք , իմաստութեան մէջ կրթուած , և պատճառք  
աճելութեան նորին , իւրաքանչիւրդ եռանդեամբ  
իմաստութեան տունը մտէք , ինչու որ բարձրելցն  
գթութիւնը վերսախն անոր դուռը բացաւ թոր-  
դոմական սերունդին : Եւ պիտի մոռնանք մի շ-  
նորհամիալութեան պարտքերնիս կատարելու զոր  
ունիմք առ լուսուած առ ազգասէք լուսուածա-  
րեալ առաջնորդ . Արտզան հայրն և բարձրապատիւ-  
յատուկ բարերարն մեր , և անոր առանձին կերպով  
մեղի ցըցուցած խնամքը չի խոստովանինք մի պիտի  
չի հրատարակենք մի նորին բարձրութեան ուսում-  
նասէք ջանքը և տառապանքը : Կնիշատակ թողուլ  
նորին բարձրուե հոգեշնորհ փոխանօրդը և դպրո-  
ցիս անօրէնն ալ ազերախտուիէ մեզ , որ կարեւոր  
միջոցներով մեր ուսումնական յառաջդիմուե հոգ  
կը տանի , նոյնպէս և այս մոլովցս և հանդիսականա-  
ցըս աղնուախտումք անձանց շնորհակալութիմէն մէծասիք՝  
որ իրենց մէծանձնութեամբ և ազգասէք ոգւով մեր  
տկարութեան խակակութ ուսման պտուղը վայելէ-  
լու յուսով այս հանդիսիս մէջ ներկայ գըտնուելու-  
բարեհաճեր են :

Ուրեմն ժիր լեռուք, նորէն կ'ըսեմ յիր լեռուք  
ով աշակերտակիցք իմ. ահաւասիկ ձեր ուսման  
արժանաւոր պտուղ ցըցընելու պատշաճ ժամանա-  
կը, յագեցուցէք արդյո հանդիսականաց արդար  
փափաքը ձեր աշխատութեան արդիւնքներով. վըս-  
տահ եղիք, մի գուցէ սխալելու երկիւղ ունենաք  
ձեր սրտին մէջ, այլ սրտապինդ և աներկիւղ հան-  
դիսացէք այս ասպարիզիս մէջ. որպէս ձեր օգտակար  
և յօժարակամ աշխատութիւնն ալպսակէք փառաց  
յաղթանակալ. 'ի պարծանս ազգին և 'ի փառոս ա-  
մենակալին Եսոտւցայ, և միանց ամայն Որն երա-  
նութեան ամենօր հնեալ Ուրիշամու տուրք Եսո-  
ուածածնի միշտկուսի՝ յորց ՚ի հզօր բարեխօսու-  
թիւն ատաւինեալ կամք ամենէքին :

Ե. Օ. Խաչատրյանը Ամբեղջ Ըստ Յանձնութեան  
աշխարհի ուսուցական համար պատճեան է:

— Պերսպանիւ Հարաստարակիչ համբաւ ատինէն Հայաստանին :

Ա թժանայարգ լրադրոց՝ ազգային պանծալիք է շըրք մանաւանդ աղջին զրաւորական Ընթացից՝ զորօդինակ գործառաց և սկզբնաւորութեան կամ աննոց օր աւուր զարգացմանը յայտնաբարբառա քարտիչ մը ըլլալով իւր թափանցիկ ազգեցութիւնը և ից արդայնոց իրայու ոչ երբէք Ընդ դիմադրելի կը մէռու և նիշը ազգիս այս մասին վերաբերեալ ցանկակի լուսկը՝ յօժարութեամբ հրատարակիր ամենասպառաբանիւ և իւր թէ միայն իր նպատակը ասոնք եղած անդր քան զարժանըն կը լոցի :

Ո Վ առաջ եմ, որ հետեւեա քանի մը ոտոց տեղեկութիւնը՝ որ նա

մակի ով հատուած է . ընդունելի ի ըլքայ իւր ազգ ածեծար և հոյակապ

տահցը մէջ, խորհուկով որ հեռաւոր երկրս մը սյունիքն ՚ի վանէն այս տեղեկութիւնս եկեր, և ընդունելու առաւել տրժանաւ որ է ։

"Фионо. Симоне д'Он, французскии мэлж фарфюматорыи и оро ше сир руко-  
и палък фарфор фарфор кин . . . . фарфор фарфюматорыи мэлж фарфюматорыи мэлж  
и мэлж фарфор фарфюматорыи . . . . мэлж фарфор фарфюматорыи мэлж фарфор фарфюматорыи мэлж  
и мэлж фарфор фарфюматорыи . . . . мэлж фарфор фарфюматорыи мэлж фарфор фарфюматорыи мэлж

Φωτιάρ Φωτιάρ διηγήσεις, ορθοπεδίου καθημερινού πολιτισμού, στην οποία μετατρέπεται το θέμα της φωτιάς σε έναν από τους πιο ενδιαφέροντες για την ανθρωπότητα.

¶ Սայն տուղեկութեմն տուողն է և իմ սուրբ ամազոսի միաբան  
թօփուլ՝ պերճիմաս Յակով վարդապետը. որ էրքիմն նաև. ժողո-  
վարոր էր Հռ. բայց այժմ իր հայրենիքը գարծած. և անդ Համազգի  
մանիկն ին ու առանձին անհապահ է հետաձգութանական. ասպարեզական

մանկաց իւր քաղաքականութեա շշնչառամբը շի խոնցեալպ սպազմի զարմանալը լը ու յ յուրաքանչիւթեան պահանձառ կ'ըսպ :

ՀՐԱՏԱՐԱԿՅԱՖ ԵՎԱԳՐԻԱ

ՅԱՅԱԿԱՎՀԱՆ

Digitized by srujanika@gmail.com

ԿՈՍԵՐԵՐՆԱԴՊՈՒՅՈ  
Տ ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏՈՒՅՆ